

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N° 1

«14» փետրվարի 2019 թ. թիվ ԲՆ-ԴՇ-19/03 պայմանագրի

ք.Երևան

«18» « 09 » 2019թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի Ժ/պ Վ.Զիլավյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պետական մարմին», մի կողմից, և «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Վ.Գուլամյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կազմակերպություն», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կառավարության 2019 թվականի օգոստոսի 29-ի «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը գումար հատկացնելու, Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1136-Ն որոշումը, ինչպես նաև կողմերի միջև 2019 թվականի փետրվարի 14-ին կնքված «ԲՆ-ԴՇ-19/03» ծածկագրով պայմանագրի 8.2 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

- 1.1. Կողմերը որոշեցին 2019 թվականի փետրվարի 14-ին կնքված «ԲՆ-ԴՇ-19/03» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝
 - 1.1.1. Պայմանագրի 11 կետում «252 666 400 (երկու հարյուր հիսուներկու միլիոն վեց հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր)» բառերը փոխարինել «366 665 000 (երեք հարյուր վաթսուներեք միլիոն վեց հարյուր վաթսուներեք հազար)» բառերով:
 - 1.1.2. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելվածներ N°1-ը և N°2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածներ N°1-ի և N°2-ի,
 - 1.1.3. «բնապահպանության» բառը փոխարինել «շրջակա միջավայրի» բառերով:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի Հավելվածներ N°1-ը և N°2-ը հանդիսանում են համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Շրջակա միջավայրի նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011007789
ՀՎՀՀ 02507198

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ

ք.Սևան, Նաիրյան 178
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018002890
ՀՎՀՀ 08602899

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի



[Handwritten signature]

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ


ա միջավայր նախարարության
 լավոր քարտուղարի ժ/պ
Վ.Զիլավյան

(ստորագրություն)
Վ.Տ.



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Սևան» ազգային պարկի
Վ. Գուլանյան
 (ստորագրություն)



ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր

Ծրագրի դասիչը՝ Միջոցառման դասիչը՝	1155 11004	Ցուցանիշներ			Տարի
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	
Միջոցառման անվանումը՝		«Սևան» ազգային պարկի պահպանության՝ պարկում գիտական ուսումնասիրությունների՝ անվտանգությունն ապահովելու նպատակով կատարվող			
Նկարագրությունը՝		«Սևան» ազգային պարկի տարածքում պահպանության՝ գիտական ուսումնասիրությունների՝ անվտանգությունն ապահովելու նպատակով կատարվող			
Միջոցառման տեսակը՝		Ծառայությունների մատուցում			
Միջոցառումն իրականացնողի անվանումը՝		Մասնագիտացված կազմակերպություններ			
Արդյունքի չափորոշիչներ					
ԲՀՊ տարածքներում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանվող տարածք, հա	147343	147343	147343	147343	147343
Գիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների թիվ, հազ	1	2	3	4	4
Սևանա լճի էկոհամակարգի բարելավում, լճի մակարդակի բացասական հաշվեկշռի բացառման ղեկավարում, տոկոս					10
Որսագործության ղեկավարի քանակի նվազում, տոկոս					10
Ապօրինի ծառահատումների քանակի նվազում, տոկոս					8
Բնական և մարդածին աղբյուրների կանխարգելման կարողություն, տոկոս					60
Միջոցառման վրա կատարվող ծախսեր (հազար դրամ)	63 166.6	126 333.1	303 498.3	366 665.0	

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ընթացակա միջավայր նախարարության
 գլխավոր բարտուղարի ժ/պ

Վ. Զիլավան




(ստորագրություն)

Վ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Սևան» ազգային պարկի ՊՈԱԿ-ի

Վ. Գուլպանյան



ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Իրականացվելիք միջոցառման

NN h/h	անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնամամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1	«Սևան» ազգային պարկի պահպանություն	Ազգային պարկի տարածքում պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում, պահապարաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումներ, պարկի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնական տեսակների գենոֆոնդի, բնության ժառանգության, պահպանություն, պաշտպանություն ազգային պարկի ամբողջ տարածքում	Կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը - Մասնագիտերի կողմից պահապարաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումների իրականացում, - Պահպանության ծառայություններ աշխատակիցների կողմից պարկի տարածքի պրոբլեմների և արգելավայրերի տարածքներում ստուգումների և շտաբային հերթապահությունների միջոցով, - «Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում	- Պատշաճ պահպանություն, - հանրության իրազեկում «Սևան» ազգային պարկի հարակից 41 համայնքներում, - ապօրինի ձկնորսության և ինքզեռնի ապօրինի որսի, ապօրինի շինարարության, ռեիեֆի խախտման, ապօրինի ծառահատման, ապօրինի աղբաթափման, ապօրինի արածեցման և այլ իրավախախտումների բացառում:	31.12 2019թ	226 602 400



2	Պարկի տարածքում գիտական հետազոտություններ	Աշխատանքային պլաններով նախատեսված գիտական հետազոտությունների իրականացում, հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոլոաստիարակություն,	Գիտության և մոնիթորինգի բաժնի աշխատակիցների կողմից աշխատանքային պլաններով նախատեսված գիտական հետազոտությունների իրականացում. - Մեծ Սևանուտ, Փոքր Սևանում, Սևանա լիճ թափվող Դրախտիկ, ձկնագետ, Գավառագետ, Ծակքար, Մարիկ, Արգիճի, Լիճք, Վարդենիկ, Մարտունի գետերի ջրերի որակի ուսումնասիրություն, մանրէաբանական, հիդրոքիմիական և հիդրոֆիզիկական հետազոտությունների իրականացում, - ձկան և խեցգետնի պոպուլյացիաների ուսումնասիրություն ՄԵՃ Սևանում և Փոքր Սևանում,	<p>- Սևանա լիճ թափվող գետերի և Սևանա լճի ջրի որակի վերաբերյալ սրդյունքների վերլուծություն,</p> <p>- ձկների կենսաբանական ցուցանիշների, որանց տարածական տեղաբաշխման և կենսապայմանների, խեցգետնի վերարտադրման առանձնահատկությունների, պոպուլյացիաների չափատարիքային և սեռական կառուցվածքի, բազմացման ժամանակաշրջանների, բերունության ցուցանիշների վերլուծություն,</p> <p>- «Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից 41 համայնքների բնակիչների էկոլոգիական իրազեկվածության մակարդակի բարձրացում,</p> <p>- գիտական ուսումնասիրությունների և մոնիթորինգի իրականացման ընթացքում ստացված տվյալների հավաքագրում, դասակարգում, տարածքների և բնական պաշարների օգտագործման հաշվառում, ամփոփում և վերլուծություն.</p>	31.12.2019թ	15 264 000
3	Մարկի տարածքում անտառտնտեսական աշխատանքներ	Մասնաճյուղերի կողմից անհրաժեշտությամբ պայմանավորված անտառազիտական և անտառտնտեսական միջոցառումներ, սանիտարական հատումներ և խնամքի աշխատանքներ:	<p>- «Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացառական աշխատանքների իրականացում, Այցելուների կենտրոնի և տարածքի այցելուներին տեղեկատվության տրամադրում,</p> <p>- էկոհամակարգերի և որանց բաղադրիչների գոյքագրում, հաշվառում և մոնիթորինգ.</p>	Տնկարկների խնամք և անտառվերականգնողական աշխատանքներ՝ ըստ անհրաժեշտության և կարիքից ելնելով	31.12.2019թ.	10 800 000
4	2018-2019թթ հարկային պարտավորություններ	Ձևավորված հարկային պարտավորությունների մարում	Մարկում հարկային պարտավորություններ	Ձևավորված հարկային պարտավորությունների մարում		113 998 600
ԸՆԴԱՄԵՆԸ						366 665 000

